Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Ըստ հայցի «ՆԱՌ-ԱՎ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ՝ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 9.1 կետով կայացված որոշումը՝ «ՆԱՌ-ԱՎ» ՍՊ ընկերության հայտը հրավերին չհամապատասխանելու հիմքով մերժելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**